ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր 09/12/2022

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 10 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Ասատրյանը, Կարեն Բաղրամյանը, Մերուժան Հովհաննիսյանը, Գրիգոր Ղարիբյանը, Արթուր Մելոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նարեկ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բաղայանը

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի ԹԻՎ 13 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Հաստատել համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 13 հերթական նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով բյուջետային ֆինանսավորման հայտերը հաստատելու մասին:
2. Ծաղկաձոր համայնքի 2023, 2024 և 2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերը հաստատելու մասին:
3. Ծաղկաձոր համայնքի տեղական տուրքերի և վճարների 2023 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:
4. Ծաղկաձոր համայնքի <<Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն>> հիմնարկը համայնքային ոչ առևտրային կազմակերպություն վերակազմակերպելու և կանոնադրությունը հաստատելու մասին:

5. Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի 2023 թվականի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
6. <<Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության և <Արծափ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2023 թվականի հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
7. Ծաղկաձոր համայնքի նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների 2023 թվականի հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
8. <<Մեղրաձորի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2023 թվականի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
9. Աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգը սահմանելու մասին:
10. Ծաղկաձոր համայյնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 167 որոշման հավելվածի թիվ 12 և 13 կետերը ուժը կորցրած ճանաչելու և գումար վերադարձնելու մասին:
11. Համայնքային սեփականություն համարվող հողամասը փոխանակելու մասին:
12. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին:
13. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին:
14. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին:
15. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի թիվ 26-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
16. Գումար վերադարձնելու մասին:
17. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 202/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով հետևյալ ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտերը՝ համաձայն հավելվածների՝

1) Հավելված1՝ Ծաղկաձոր համայնքում սգո սրահի կառուցում,

2) Հավելված 2՝ Ծաղկաձոր համայնքի Վ.Հարությունյան փողոցի հենապատերի վերակառուցման և վերանորոգման աշխատանքներ,

3) Հավելված 3՝ Ծաղկաձոր համայնքի Խ.Կեչառեցի փողոցում կոյուղու և ջրահեռացման համակարգի կառուցում և Սարալանջի փողոցում կոյուղու կառուցում,

4) Հավելված 4՝ Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի 3-րդ, 9-րդ և 11-րդ փողոցների կապիտալ վերանորոգում՝ ասֆալտապատում,

5) Հավելված 5՝ Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր բնակավայրի 1-ին և 3-րդ փողոցների կապիտալ վերանորոգում՝ ասֆալտապատում,

6) Հավելված 6՝ Ծաղկաձոր համայնքի Մարմարիկ բնակավայրի 7-րդ, 9-րդ փողոցների և 11-րդ փողոց 1-ին փակուղու փողոցների կապիտալ վերանորոգում՝ ասֆալտապատում,

7) Հավելված 7՝ Ծաղկաձոր համայնքի Արտավազ և Փյունիկ բնակավայրերի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի կառուցում,

8) Հավելված 8՝ Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր բնակավայրի խմելու ջրի խողովակների նորոգում և ջրավազանների կառուցում,

9) Հավելված 9՝ Ծաղկաձոր համայնքի Աղավնաձոր բնակավայրի մշակույթի տան մասնակի վերանորոգում

10) Հավելված 10՝ Ծաղկաձոր համայնքի Հանքավան բնակավայրի գազաֆիկացում:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 203/

Լսեցին
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023, 2024 և 2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 151-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝

Հաստատել Ծաղկաձոր համայնքի 2023, 2024 և 2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերը՝ համաձայն 1-7 հավելվածների:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 204/

Լսեցին

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 14-րդ հոդվածով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածով՝

1. Սահմանել Ծաղկաձոր համայնքի տեղական տուրքերի 2023 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի 1-ի:

2. Սահմանել Ծաղկաձոր համայնքի տեղական վճարների 2023 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի 2-ի:

3. Սահմանել 2023 թվականի ընթացքում Ծաղկաձոր համայնքի կողմից մատուցվող նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի դրույքաչափը և արտոնությունները՝ համաձայն հավելված 3-ի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից գործում է 2023 թվականի հունվարի 01-ից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 205-Ն/

Լսեցին

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՄԵՂՐԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԻՄՆԱՐԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի պահանջներով՝

1. Ծաղկաձոր համայնքի <<Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն>> հիմնարկը վերակազմակերպել Ծաղկաձոր համայնքի <<Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2. Հաստատել <<Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 206/

Լսեցին

ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Հաստատել Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի 2023 թվականի կառուցվածքը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2023 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Առաջարկել Ծաղկաձոր համայնքի ղեկավարին՝ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու նպատակով սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:
4. Սույն որոշման 1-ին, 2-րդ կետերն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ-9 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 207/

Լսեցին

<<ԾԱՂԿԱՁՈՐԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ <<ԱՐԾԱՓ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ղեկավար առաջարկությունը՝

5

1. Հաստատել <<Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2023 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել <<Արծափ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2023 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 01-ից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 208/

Լսեցին

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, "Նախադպրոցական կրթության մասին" օրենքի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հունվարի 26-ի թիվ 29 հրամանով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Հաստատել <<Ծաղկաձոր քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2023 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել <<Մեղրաձոր գյուղի Լևոն Գալստյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2023 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Հաստատել <<Արտավազ գյուղի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2023 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 3-ի:
4. Հաստատել <<Աղավնաձոր գյուղի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2023 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 4-ի:
5. Հաստատել <<Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2023 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 5-ի:
6. Հաստատել <<Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2023 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 6-ի:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 01-ից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 209/

Լսեցին

<<ՄԵՂՐԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Հաստատել Ծաղկաձոր համայնքի << Մեղրաձորի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2023 թվականի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 01-ից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 210/

Լսեցին

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> 19-րդ հոդվածով՝

Սահմանել Ծաղկաձոր համայնքի աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 211/

Լսեցին

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 167 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ԹԻՎ 12 ԵՎ 13 ԿԵՏԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածքվ և հիմք ընդունելով Հովհաննես Զաքարյանի դիմումը՝

1. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականիհոկտեմբերի 14-ի <<Համայնքային սեփականություն համարվող հողամասերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին>> թիվ 167 որոշման հավելվածի 12-րդ և 13-րդ կետերը:

2. Հովհաննես Աշոտի Զաքարյանին վերադարձնել Մեղրաձոր գյուղի 1,054188 հա մակերեսով գյուղատնտեսական արոտավայրի համար նախատեսված հողամասի աճուրդի նախավճարը՝ 700000 (յոթ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, մասնակցության վճարը՝ 40 000 (քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 212/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 71-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 6-րդ գլխի պահանջներով և հիմք ընդունելով <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> Փակ բաժնետիրական ընկերության 18.11.2022 թվականի թիվ ԴԳ-6783 գրությունը՝

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարին համայնք Ծաղկաձոր, Սարալանջի փողոց թիվ 41 հասցեում գտնվող 0,0875 հա մակերեսով, համայնքային սեփականություն հանդիսացող հատուկ պահպանվող հանգստի համար նախատեսված հողամասը փոխանակել համայնք Ծաղկաձոր, Սարալանջի փողոց, թիվ 50/1 հասցեում գտնվող, <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> փակ բաժնետիրական ընկերության սեփականությունը հանդիսացող 0,0875 հա մակերեսով, հատուկ պահպանվող հանգստի համար նախատեսված համարժեք հողամասի հետ՝ հողամասի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 213/

Լսեցին

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Սնակ Ղարիբյանի լիազորված անձ Էրիկ Մուրադյանի դիմումը՝

1. Սնակ Ղարիբյանին ուղղակի վաճառքով՝ որպես ընդլայնում օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր, Վ.Հարությունյան փողոց, 3 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 07-005-0026-0664/ 0.15 հա մակերեսով հատուկ պահպանվող, հանգստի համար նախատեսված հողամասին կից՝ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, քաղաք Ծաղկաձոր, Վ.Հարությունյան փողոց, թիվ 3/3 հասցեում գտնվող 0.15 հա մակերեսով համայնքային սեփականություն համարվող՝ հատուկ պահպանվող հանգստի համար նախատեսված հողամասը:

2. Հողամասի վաճառքի գինը սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 24 264 900 (քսանչորս միլիոն երկուհարյուր վաթսունչորս հազար ինը հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

Կողմ-9 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 214/

Լսեցին

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով և հիմք ընդունելով Դավիթ Հովհաննիսյանի դիմումը՝

1. Դավիթ Պատվականի Հովհաննիսյանին ուղղակի վաճառքով՝ որպես ընդլայնում օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, գյուղ Արտավազ, գյուղ Փյունիկ, 1-ին փողոց, 32 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 07-017-0034-0008/ 0.0205 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման համար նախատեսված հողամասին և հողամասի վրա առկա 17,39 քմ մակերեսով շինությանը կից՝ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, գյուղ Արտավազում գտնվող 0.00710 հա մակերեսով համայնքային սեփականություն համարվող՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման համար նախատեսված հողամասը:

2. Հողամասի վաճառքի գինը սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 133317 (մեկ հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր տասնյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 215/

Լսեցին
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերով և հիմք ընդունելով Անդրանիկ Հրաչյայի Խանսանամյանի դիմումը՝

1. Անդրանիկ Հրաչյայի Խանսանամյանին ուղղակի վաճառքով՝ որպես ընդլայնում օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց, թիվ 11 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 07-005-000024-0005/ 0.243 հա մակերեսով հատուկ պահպանվող, հանգստի համար նախատեսված հողամասին և հողամասի վրա առկա 2851,41 քմ ընդհանուր մակերեսով շինություններին կից՝ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, քաղաք Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց, թիվ 9/2 հասցեում գտնվող 0.04 հա մակերեսով համայնքային սեփականություն համարվող՝ հատուկ պահպանվող հանգստի համար նախատեսված հողամասը:

2. Հողամասի վաճառքի գինը սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 6 470 640 (վեց միլիոն չորս հարյուր յոթանասուն հազար վեց հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

Կողմ-9 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 216/

Լսեցին
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 26-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի <<Ծաղկաձոր համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> թիվ 26-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Տող 11301 - Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար <<2290,0>> թիվը փոխարինել <<5000,0>> թվով:

2) Տող 11304 - Համայնքի վարչ. տարածքում, սահմանամերձ բարձրլեռն. համայնք-ի վարչ. տարածքում, բացառ. միջպետ. և հանրապետ. նշանակ. ավտոմոբիլ. ճանապարհ-ի կողեզրում, խանութ-ում և կրպակ-երում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկ. նավթ . գազ-ի վաճառքի թույլտվ. համար <<1400.0>> թիվը փոխարինել <<1260.0>> թվով:

3) Տող 11307 - Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար <<10697.0>> թիվը փոխարինել <<12700.0>> թվով:

4) Տող 11309 - Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար <<8500.0>> թիվը փոխարինել <<9671.0>> թվով:

5) Տող 11310 - Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանր ային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար <<5328.4>> թիվը փո խարինել <<6300.0>> թվով:

6) Տող 11312- Ավագանու սահմանված կարգին ու պայմանին համ.՝ համայնքի վարչ. տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվ. համար, բացառ. միջպետ. ու հանրապետ. նշանակ. ավտոմոբիլ. ճանապարհ-ի օտարման շերտերում և պաշտպ. գոտի-ում տեղադ. գովազդ-րի թույլտվ-րի (բացառ. Երևանքաղաքի) <<16556.3>> թիվը փոխարինել <<20000.0>> թվով:

7) Տող 11313- Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվ. համար <<400.0>> թիվը փոխարինել <<500.0>> թվով:

8) Տող 11317- Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության իրավասություն իրականացնելու թույլտվության համար <<80.0>> թիվը փոխարինել <<160.0>> թվով:

9) Տող 11318- Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար <<300.0>> թիվը փոխարինել <<440.0>> թվով:

10) Տող 1255- Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) <<762.8>> թիվը փոխարինել <<1851.5>> թվով:

11) Տող 12503- Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար <<40500.0>> թիվը փոխարինել <<26700.0>> թվով:

12) Տող 12505- Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար <<730.8>> թիվը փոխարինել <<2162.8.>> թվով:

13) Տող 12513- Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար <<2000.0>> թիվը փոխարինել <<2500.0>> թվով:

14) Տող 1361- Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ<<1000.0>> թիվը փոխարինել <<1300.0>> թվով:

15) Տող 1381- Նվիր, ժառանգ. իրավ-ով ֆիզ. անձ. և կազմակերպ-ից համ-ին, վերջինիս ենթ. բյուջ. հիմն. տնօրին. անցած գույքի (հիմն. միջ. կամոչնյութ. ակտ. չհանդ.) իրաց-ից և դրամ. միջ-ից կապ. ծախս. ֆին. համար համ. բյուջե ստ. մուտքեր՝ տրամ. արտաքին աղբյուր-ից <<0.0>> թիվը փոխարինել <<6829.9>> թվով:

16) Բաժին 1 խումբ 1դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում) հոդված 4111 (Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ) <<165000.0>> թիվը փոխարինել <<168000.0>> թվով:

17) Բաժին 1 խումբ 1դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում) հոդված 4112 (Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ) <<50836.0>> թիվը փոխարինել <<52191.0>> թվով:

18) Բաժին 2 խումբ 5 դաս 1 (Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)) հոդված 4841 (Բնական աղետներից առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում) <<12100,0>> թիվը փոխարինել <<4644.0>> թվով:

19) Բաժին 4 խումբ 5 դաս 1 (Ճանապարհային տրանսպորտ) հոդված 5134 (Նախագծահետազոտական ծախսեր) <<14192.3>> թիվը փոխարինել <<15662.8>> թվով:

20)Բաժին 4 խումբ 5 դաս 5 (Խողովակաշարային և այլ տրանսպորտ) հոդված 5134 (Նախագծահետազոտական ծախսեր) <<4700.0>> թիվը փոխարինել <<5200.0>> թվով:

21) Բաժին 4 խումբ 9 դաս 1 (Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)) հոդված 8411 (Հողի իրացումից մուտքեր) <<-635000.0>> թիվը փոխարինել <<-851000.0>> թվով:

22)Բաժին 5 խումբ 1 դաս 1 (Աղբահանում) հոդված 4215 (Ապահովագրական ծախսեր) <<300.0>> թիվը փոխարինել <<500.0>> թվով:

23)Բաժին 5 խումբ 2 դաս 2 (Կեղտաջրերի հեռացում) հոդված 5112 (Շենքերի և շինությունների կառուցում) <<343216.0>> թիվը փոխարինել <<593216.0>> թվով:

24)Բաժին 6 խումբ 4 դաս 1 (Փողոցների լուսավորում) հոդված 4212 (Էներգետիկ ծառայություններ) <<13309.0>> թիվը փոխարինել <<14310,0>> թվով

25)Բաժին 8 խումբ 2 դաս 3 (Մշակույթիտներ, ակումբներ, կենտրոններ) հոդված 5113 (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) <<1340,6>> թիվը փոխարինել <<5000,0>> թվով>>:

26)Բաժին 9 խումբ 1 դաս 1 (Նախադպրոցական կրթություն) հոդված 4511 (Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին) <<101479.9>> թիվը փոխարինել <<103379.9>> թվով>>:

17

27)Բաժին 9 խումբ 2 դաս 2 (Հիմնական ընդհանուր կրթություն) հոդված 5112 (Շենքերի և շինությունների կառուցում) <<57000.0>> թիվը փոխարինել <<24200.0>> թվով>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 217/

Լսեցին
ԳՈՒՄԱՐ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով Սամվել Մինասյանի դիմումը՝

Սամվել Մինասյանին վերադարձնել 900125002551 հաշվեհամարին սխալմամբ փոխանցված 94 146 /իննսունչորս հազար հարյուր քառասունվեց/ Հայաստանի Հանրապետության դրամ գումարը:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 218/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության <<Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը հաստատելու մասին>> թիվ 698-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 39-րդ կետի 1-ին ենթակետով՝

Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Սարալանջի փողոց թիվ 3/1 հասցեում գտնվող, 0.17037 հա մակերեսով հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 219/

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀՈՎԻԿ ԳՈԳՈԼՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀՄԱՅԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՑԱԽԿԱԴՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՑԱԽԿԱԴՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
РА СЮНИКСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ ЦАХКАДЗОР
REGION TSAGHKADZOR MUNICIPALITY
03027029

Ճիստն արձանագրեց՝ Գարիկ Բաղալյանը

_____